ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1909-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով «Դավիթ Թ.Ա.Գ.» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Դավիթ Թ.Ա.Գ.» ՍՊԸ -ին / գործունեությունը՝ ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 25 / 1-8 հասցե / տրամադրել 2023թ. 4-րդ եռամսյակի համար՝
 - 1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 13.100դրամ ;
 - 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 13.100 դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «Դավիթ Թ.Ա.Գ.» ՍՊԸ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 05
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1910-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Գագիկ Պետրոսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Գագիկ Պետրոսյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 15 հասցեում գտնվող գոյություն ունեցող առևտրի սրահին կից կցակառույցի կառուցման համար :
2. Գագիկ Պետրոսյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Գագիկ Պետրոսյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Գագիկ Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 05
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1911-Ա

ՇԽՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Տաթևիկ Առաքելյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի միջնակարգ դպրոցին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Վարսեր, 7-րդ փողոց թիվ 10 հասցեում գտնվող թիվ 1 և թիվ 2 մասնաշենքերի ջեռուցման համակարգի կառուցման համար:
2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի միջնակարգ դպրոցը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի միջնակարգ դպրոցը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Տաթևիկ Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1912-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 25-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ք.Սևան Ս.Սևանեցու փողոց թիվ 7 / 32 բնակարանի բնակիչ Արտյոմ Դավթյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով Արտյոմ Դավթյանին և Արմինե Գաբրիելյանին պատկանող, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 17 / 1-7 հասցեում գտնվող բնակարանին կից ինքնակամ զբաղեցրած 27.67քմ և 13.26քմ մակերեսներով շինությունները, ինքնակամ կառուցված 10.62քմ մակերեսով ծածկն օրինականացնելու մասին, նկատի ունենալով, որ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև առկա է բազմաբնակարան շենքի սեփականատերերի համաձայնությունը, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 17 / 1-7 հասցեում գտնվող 110.80քմ մակերեսով բնակարանին կից գտնվող, Արտյոմ Դավթյանի և Արմինե Գաբրիելյանի կողմից 2008թ. ինքնակամ զբաղեցրած 27.67քմ մակերեսով բնակելի նշանակության շինության, 10.62քմ մակերեսով ծածկի և 13.26քմ մակերեսով շինության կառուցման աշխատանքները ճանաչել օրինական՝ համայնքի բյուջե մուծելով օրինականացվող յուրաքանչյուր 1քմ շինության համար՝ 590.7 դրամ, յուրաքանչյուր ձևափոխված դռան և պատուհանի համար՝ 1673դրամ / դուռ՝ 1 հատ, պատուհան՝ 3 հատ/:
2. Ք. Սևան, Ս.Սևանեցու փողոց թիվ 17 / 1-7 հասցեում գտնվող 151.73քմ մակերեսով անշարժ գույքի գործառական նշանակությունը փոխել հասարակականի /հաշվառման տեղեկանք՝ 2023UFB8SG/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 17 / 45 խանութ հասցե:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Արտյոմ Դավթյանին և Արմինե Գաբրիելյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1913-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 11-րդ 18-րդ կետերով, հիմք ընդունելով քաղ. Յուրիկ Սարգսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, գյուղ Լճաշեն, 24-րդ փողոց, 1-ին նրբանցք թիվ 12 հասցեում գտնվող 0.38հա մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից ինքնական կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Յուրիկ Սարգսյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, գյուղ Լճաշեն, 24-րդ փողոց, 1-ին նրբանցք թիվ 12 հասցեում գտնվող և փաստացի օգտագործվող 0.37656հա մակերեսով հողատարածքի վրա սեփականատիրոջ կողմից 2015թ. ինքնական կառուցված 71.69քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 58.59քմ/, 2016թ. կառուցված 49.81քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 39.22քմ/, 8.75քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023TLYFST/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 1028 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Յուրիկ Սարգսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1914-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 11-րդ 18-րդ կետերով, հիմք ընդունելով Էդգար Ավետիսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Ծաղկունք, 5-րդ փողոց, 1-ին նրբանցք թիվ 4 հասցեում գտնվող 0.235հա մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Էդգար Ավետիսյանին պատկանող, Սևան համայնք, գ. Ծաղկունք, 5-րդ փողոց, 1-ին նրբանցք թիվ 4 հասցեում գտնվող և փաստացի օգտագործվող 0.23482հա մակերեսով հողատարածքի վրա սեփականատիրոջ կողմից 2020թ. ինքնակամ կառուցված 147.74քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 122.20քմ/, 2012թ. կառուցված 28.56քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը 23.70քմ/, 2020թ. կառուցված 26.81քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023B6AWLE/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 874.0 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Էդգար Ավետիսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1915-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 11-րդ 18-րդ կետերով, հիմք ընդունելով քաղ. Խաչատուր Ֆերոյանի դիմումը՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով Խաչատուր և Սուսաննա Ֆերոյաններին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 13-րդ փողոց թիվ 38 հասցեում գտնվող 0.27077հա մակերեսով հողատարածքում սեփականատերերի կողմից ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով Խաչատուր և Սուսաննա Ֆերոյաններին պատկանող, Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 13-րդ փողոց թիվ 38 հասցեում գտնվող 0.27077հա մակերեսով հողատարածքի վրա սեփականատերերի կողմից 2020թ. ինքնակամ կառուցված 133.45քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 109.37քմ/, 27.73քմ մակերեսով ավտոտնակ-նկուղը /ներքին մակերեսը՝ 22.67քմ/ ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023KQVZQ8/ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 874.0 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Խաչատուր Ֆերոյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1916-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 25, 27, 32 կետերով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Անդրանիկ Վահանյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, գ. Գագարին, Թումանյան փողոց, 2 շենք թիվ 3 հասցեում գտնվող անշարժ գույքին կից ինքնակամ կառուցված 2.2քմ մակերեսով բնակելի նշանակության շինության շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով, որ կատարված շինարարական աշխատանքների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև առկա է Սևան համայնք, ք. Սևան, գ. Գագարին, Թումանյան փողոց թիվ 2 բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի գրավոր համաձայնությունը, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, գ. Գագարին, Թումանյան փողոց, 2 շենք թիվ 3 հասցեում գտնվող անշարժ գույքին կից ինքնակամ կառուցված 2.2քմ մակերեսով բնակելի նշանակության շինությունը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 20236T5EZR /՝ համայնքի բյուջե մուծելով շինությունների յուրաքանչյուր 1քմ-ի համար՝ 362.7 դրամ:
2. Սևան համայնք, ք. Սևան, գ. Գագարին, Թումանյան փողոց, 2 շենք թիվ 3 հասցեում գտնվող բնակարանում սեփականատիրոջ կողմից կատարված ներքին ձևափոխման աշխատանքները ճանաչել օրինական՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր ձևափոխված դռան և պատուհանի համար՝ 1209 դրամ / դուռ՝ 4 հատ, պատուհան՝ 1 հատ/:
3. Օրինական ճանաչել Սևան համայնք, ք. Սևան, գ. Գագարին, Թումանյան փողոց թիվ 2 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքում առկա ինքնակամ կառույցը:
4. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Անդրանիկ Վահանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 05
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1917-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 25, 27, 32 կետերով, հիմք ընդունելով քաղ. Տիգրան Քոչարյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, ք.Սևան, Նաիրյան փողոց, 181 շենք թիվ 1 բնակարանին կից ինքնակամ կառուցված 12.33քմ մակերեսով բնակելի նշանակության շինության կառուցման շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ կատարված շինարարական աշխատանքների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով, որ ներկայացված է ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի գրավոր համաձայնությունը, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Նաիրյան փողոց, 181 շենք թիվ 1 բնակարանին կից ինքնակամ կառուցված 12.33քմ մակերեսով բնակելի նշանակության շինությունը /ներքին մակերեսը՝ 7.29քմ/ ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 20233UCYYE/՝ համայնքի բյուջե մուծելով շինությունների յուրաքանչյուր 1քմ-ի համար՝ 501.9 դրամ:
2. Օրինական ճանաչել ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքում առկա ինքնակամ կառույցը:
3. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Տիգրան Քոչարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 05
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1918-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 17.11.2023Թ. N 1777-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 17.11.2023թ. «Սևան համայնքի ղեկավարի՝ 29.09.2023թ. N 1427-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 1777-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝
 - 1) «/ներքին մակերեսը՝ 49.54քմ/» բառերի փոխարեն կարդալ «/ներքին մակերեսը՝ 25.13քմ/» բառերը:
 2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 05
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1919-Ա

ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի 2023թ. բյուջեի ընդհանուր բնույթի ծախսերի հաշվից /բաժին 01, խումբ 6, դաս 1, հոդված 4241/ 05-004-0022-0063, 05-004-0022-0039, 05-004-0022-0141, 05-004-0022-0024 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերի վերաբերյալ փաստաթղթերի պատճենների ձեռք բերման արժեքը՝ յուրաքանչյուրը 2000 դրամ, Սևան համայնք, ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 6 / 302 հասցեում գտնվող, 05-004-0010-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի վերաբերյալ փաստաթղթերի պատճենների ձեռք բերման արժեքը՝ 2200 դրամ, փոխանցել ՀՀ ԿԿ հաշվեհամարին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 05
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1920-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ք. Սևան, Լճափնյա փողոց թիվ 13 տան բնակիչ Էդիկ Մուրադյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 17 / 44 հասցեում գտնվող տարածքի /վկայական՝ 27112023-05-0144/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 17 / 44 հասցեում գտնվող տարածքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 17 / 44 տարածք հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Էդիկ Մուրադյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 05
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1921-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 02.12.2022Թ. N 1439-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 02.12.2022թ. «Հողամասի սահմանների ուղղման և ճանաչման մասին» 1439-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝
 - 1) Ուղղել և հաստատել՝ Սևան համայն, գ. Ծաղկունք, 7-րդ փողոց թիվ 20 հասցեում /նախկինում՝ ք. Սևան, «Գագարին» սառցակոմբինատ հասցե/ գտնվող 33.600քմ մակերեսով հողատարածքի սահմանները, գծային չափերը, երկրաչափական պատկերը՝ հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 05
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1922-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արևշատ Գնդոյանի դիմումը՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Արևշատ Գնդոյանին և Տաթևիկ Գևորգյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 147 / 43 հասցեում գտնվող անշարժ գույքը /վկայական՝ 30042019-05-0045/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին,
որոշում եմ.

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 147 / 43 հասցեում գտնվող 0.0076հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝
 - 1) առաջին միավոր գույքի՝ 34.9քմ մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 147 / 43 տնտեսական շինություն հասցե;
 - 2) երկրորդ միավոր գույքի՝ 41.1քմ մակերեսով հողատարածքի և հողատարածքում գտնվող շինությունների համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան Նաիրյան փողոց թիվ 147 / 47 տնտեսական շինություն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
- 3 Սույն որոշումն ուժի մեջ է՝ Արևշատ Գնդոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 05
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1923-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Միսակ Ղասաբօղլյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 176 / 7 հասցեում կառուցված 21.1քմ մակերեսով ավտոտնակը, 4.49քմ մակերեսով ծածկը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 25.6քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ ավտոտնակը և զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 176 / 7 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 01.11.2023թ. թիվ 1655-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 01.12.2023թ. պետական գրանցում ստացած 21.1քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673դրամ, 4.49քմ մակերեսով ծածկը՝ 1քմ՝ 3346դրամ, զբաղեցրած 25.6քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած Միսակ Ղասաբօղլյանին :
2. Քաղ. Միսակ Գառնիկի Ղասաբօղլյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Միսակ Ղասաբօղլյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1924-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Արսեն Նավասարդյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 3 / 113 հասցեում կառուցված 25.87քմ մակերեսով ավտոտնակը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 25.87քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ ավտոտնակը և զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 3 / 113 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 13.11.2023թ. թիվ 1726-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 29.11.2023թ. պետական գրանցում ստացած 25.87քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1969դրամ, զբաղեցրած 25.87քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 4441.8դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած Արսեն Նավասարդյանին :
2. Քաղ. Արսեն Նավասարդյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Արսեն Նավասարդյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1925-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Սմբատ Մնացականյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 42 / 73 հասցեում կառուցված 25.2քմ մակերեսով ավտոտնակը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 25.2քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ ավտոտնակը և զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 42 / 73 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 06.11.2023թ. թիվ 1690-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 23.11.2023թ. պետական գրանցում ստացած 25.2քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673դրամ, զբաղեցրած 25.2քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած Սմբատ Մնացականյանին:
2. Քաղ. Սմբատ Մնացականյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Սմբատ Մնացականյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1926-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. էդիկ Սարիբեկյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Ս.Սևանեցու փողոց թիվ 6 / 7 հասցեում կառուցված 24.0քմ մակերեսով ավտոտնակը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 24.0քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ ավտոտնակը և զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան Ս.Սևանեցու փողոց թիվ 6 / 7 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 01.11.2023թ. թիվ 1653-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 24.11.2023թ. պետական գրանցում ստացած 24.0քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1969դրամ, զբաղեցրած 24.0քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 4441.8դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած էդիկ Սարիբեկյանին :
2. Քաղ. էդիկ Մեսրոպի Սարիբեկյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ էդիկ Սարիբեկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1927-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Ավետիք Պողոսյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության վկայագրի Ավետիք Պողոսյանին պատկանող, Լճաշեն համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի՝ 14.04.1991թ. թիվ 10 նիստի որոշման համաձայն՝ Ավետիք և Մարուշ Պողոսյաններին պատկանող, անհատական բնակելի տան կառուցման համար սեփականաշնորհված 1000քմ մակերեսով հողատարածքը, հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության վկայագրի Ավետիք Պողոսյանին պատկանող և Լճաշեն համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի՝ 14.04.1991թ. թիվ 10 նիստի որոշման համաձայն՝ անհատական բնակելի տան կառուցման համար Ավետիք Հայկազի Պողոսյանին /ծնված՝ 26.07.1973թ./, Մարուշ Համբարձումի Պողոսյանին /ծնված՝ 04.09.1938թ./ սեփականաշնորհված 1000քմ մակերեսով հողատարածքին կից 101.1քմ մակերեսով հողատարածքի և նրանց կողմից փաստացի օգտագործվող 1101.1քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Ավետիք և Մարուշ Պողոսյանների սեփականության իրավունքը:
2. Ավետիք և Մարուշ Պողոսյաններին պատկանող 1101.1քմ մակերեսով հողատարածքում 1954թ. կառուցված 34.82քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 19.20քմ/, 167.05քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 128.63քմ/, 1948-1954թթ. կառուցված 61.51քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 42.49քմ/, 1949թ. կառուցված 60.73քմ մակերեսով հացատուն-անասնազոմը /ներքին մակերեսը՝ 41.12քմ/, 1979թ. կառուցված 17.51քմ մակերեսով խորդանոցը /ներքին մակերեսը՝ 12.51քմ/, 1954թ. կառուցված 3.0քմ մակերեսով բաց պատշգամբը, 1993թ. կառուցված 2.59քմ մակերեսով բաց պատշգամբը, 1956թ. կառուցված 14.10քմ մակերեսով ծածկը, 1979թ. կառուցված 13.24քմ մակերեսով

- պարիսպը ճանաչել Ավետիք և Մարուշ Պողոսյանների սեփական գույքը տրամադրելով՝ Սևան համայնք, գ. Լճաշեն, 2-րդ փողոց թիվ 8 բնակելի տուն հասցե:
3. Սեփականության իրավունքով Ավետիք և Մարուշ Պողոսյաններին պատկանող, Սևան համայնք, գ. Լճաշեն, 2-րդ փողոց թիվ 8 հասցեում գտնվող 2013թթ. կառուցված 9.92քմ մակերեսով ծածկերը ճանաչել ինքնակամ շինություն:
 4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Ավետիք և Մարուշ Պողոսյաններին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 05
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1928-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.01495հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել Սևան քաղաքի գլխավոր հատակագծին, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց, 1-ին նրբանցք թիվ 1 / 16 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 16.06.2023թ. N 786-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 06
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1929-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ Օ.00800հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել Սևան քաղաքի գլխավոր հատակագծին, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 141 / 44 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 16.06.2023թ. N 786-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 06
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1930-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

- Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00648հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 12 / 1 հողամաս հասցե:
- Պետական գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 16.06.2023թ. N 786-Ա որոշման 1-ին կետի:
- Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 06
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1931-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00180հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Խ. Աբովյան փողոց թիվ 9 / 59 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 16.06.2023թ. N 786-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 06
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1932-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00242հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել Սևան քաղաքի գլխավոր հատակագծին, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 7 / 5 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 16.06.2023թ. N 786-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 06
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1933-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ կետով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված Սևան քաղաքի / բնակավայրի / գլխավոր հատակագծի լրամշակման մասին՝ 12.03.2016թ. N18 եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց 140 / 2-2 հասցեում գտնվող 0.0045 հա մակերեսով ընդհանուր օգտագործման հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանեցնել Սևան քաղաքի / բնակավայրի / լրամշակված գլխավոր հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական՝ գործառնական նշանակության:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակաման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 06
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1934-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 844-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Սևակ Գալստյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի, 57-58կմ թիվ 40 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N 14032022-05-0063/ զբաղեցրած 0.1հա մակերեսով տարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի, 57-58կմ թիվ 40 հասցեում գտնվող 0.1հա մակերեսով անշարժ գույքին կից գտնվող 0.02774հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել Սևան քաղաքի լրամշակված գլխավոր հատակագծին և կատարել պետական գրանցում՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի 57-58կմ թիվ 40 / 1 հողամաս հասցե:
2. Սեփականության իրավունքով Սևակ Լևոնի Գալստյանին պատկանող, Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի 57-58կմ թիվ 40 հասցեում գտնվող 0.1հա մակերեսով անշարժ գույքը ընդլայնել 0.02774հա մակերեսով՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի 57-58կմ թիվ 40 / 1 հողամաս հասցե, ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 792.0 դրամ, վճարելու պայմանով:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց, համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
4. Պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 16.06.2023թ. N786-Ա որոշման 1-ին կետի:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Սևակ Գալստյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 06
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1935-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Գայանե Գևորգյանի դիմումը՝ իր կողմից՝ ք. Սևան, Նալբանդյան փողոցի թիվ 25 շենքի հարևանությամբ՝ ավտոտնակների շարքում, ինքնակամ կառուցված 18.20քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

